ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 02 >> 10 2013թ. N: 236-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված <<Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգի>> 5-րդ և 7-րդ կետերի դրույթներով, համաձայն <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2013 թվականի միջոցառումների պլանի>>՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2013 թվականի հոկտեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի <<Նայթեքս>> բաց բաժնետիրական ընկերության տարածքում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն <<Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպումը փլատակներում հրդեհի օջախի առկայության դեպքում>> թեմայով:

2. Ուսումնավարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Ս. Պետրոսյանին, ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ Մ. Սարիբեկյանին:

3. Ուսումնավարժությունում ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությունը, Անիի հրշեջ փրկարարական ջոկատը.

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը.

3) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչությունը.

4) <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> փակ բաժնետիրական ընկերության <<Ղարս>> մասնաճյուղը.

5) <<Շիրակջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերության <<Մարալիկ>> տեղամասը.

6) <<Հայռուսգազարդ>> փակ բաժնետիրական ընկերության Շիրակի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղը.

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքապետարանի աշխատակազմը:

4. Հանձնարարել՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին՝

ա.մինչև 2013 թվականի հոկտեմբերի 11-ը ուսումնավարժության ղեկավարի հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի փաթեթը,

բ. կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի,

գ. մինչև 2013 թվականի հոկտեմբերի 21-ը զեկուցել ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին.

2) Ուսումնավարժության մասնակիցներին՝

ա. ճշգրտել ուսումնավարժության գործողությունների պլանները,

բ. պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, ուսումնավարժության ընթացքում ապահովել անվտանգության կանոնների պահանջների կատարումը:

5. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Իսկականի հետ ճիշտ է՝

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ